ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 25 » ապրիլի 2024թ. № 99-Ա

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 03.08.2018Թ. «ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 66-Ա ԵՎ 20.08.2020Թ. ԹԻՎ 85-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով և 9-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով.

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 03.08.2018թ. «Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 66-Ա որոշման թիվ 2 հավելվածը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի:

2. Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 20.08.2020թ. «Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 85-Ա որոշման հավելվածը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

**2024թ. ապրիլի 25**
**գ. Լոռի Բերդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 26 » ապրիլի 2024թ. № 100-Ա

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 27.12.2023թ. թիվ 84-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետը՝

**որոշում եմ.**

1. Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 01-01-01 դասակարգմամբ «կառավարման ապարատ» նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. 4264 հոդվածով սահմանված 3.300.000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) դրամ գումարից 500.000 (հինգ հարյուր հազար) դրամը տեղափոխել 4267 հոդված և հոդվածները ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

4264 հոդվածի մասով,

1-ին եռամսյակ – 2.250.000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 2.250.000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 2.550.000 (երկու միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 2.800.000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) դրամ:

4267 հոդվածի մասով.

1-ին եռամսյակ – 300.000 (երեք հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 1.100.000 (մեկ միլիոն հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 1.300.000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:

2. Լոռի Բերդ համայնքի 2024թ. բյուջեի 01-06-01 դասակարգմամբ «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունները.

2.1. 4252 հոդվածով սահմանված 400.000 (չորս հարյուր հազար) դրամը տեղափոխել 4823 հոդված և 4823 հոդվածը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 1.000.000 (մեկ միլիոն) դրամ,
2-րդ եռամսյակ – 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 1.400.000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) դրամ:

2.2. 4241 հոդվածով սահմանված 2.000.000 (երկու միլիոն) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 500.000 (հինգ հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 600.000 (վեց հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 2.000.000 (երկու միլիոն) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2024թ. ապրիլի 26
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ. loriberd.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 02 » մայիսի 2024թ. № 101-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-044-0011-0025 ԵՎ 06-044-0011-0037 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ 0.302ՀԱ ԵՎ 0.39946ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 0.70146ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված միավորման հատակագիծը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0011-0025 և 06-044-0011-0037 կադաստրային ծածկագրերի տակ գտնվող անշարժ գույքի միավորման արդյունքում առաջացած 0.70146հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ 1-ին փողոց, թիվ 2 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՊԱՊԻԿՅԱՆ

Կ.Տ

2024թ. մայիսի 02
գ. Լոռի Բերդ